

С.1930/979


№ 62

ԳԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԵՎՈՐԻՆ

№ 62

ԽՈՐՀՈՂԱՑԻՆ ՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ Ա.Ա.Ֆ.Խ.-ԱԽՄ
ՅԱՄԿՈՄԿՈՒՄ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԲԱԺՆԻ
ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱԿՈՏԵՔՆ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀԱՅԱԿՈՏԵՔՆ Ո.ՏԻ ՀՐԵՎԱՅՐԿՉՈՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎ. 1929

338.98

2-21

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄՐ

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ «ԳՅՈՒՂԵՏԱՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎԱԾԱԼ ԳՐՔԵՐԸ.

1. Աւդեցոյց անտառային աշխատավորի	50
2. Ա. Շաղոնց.—Խեր անելիքները (սպառված)	20
3. Հ. Փիրումյան և Մելքոնյան.—Ինչո՞ւ ձևահամար և գործարանում յաղ և զվեցը պանիք պատրաստելը (սպառվ.)	3
4. Փիրումյան.—Խոստույթերը և նրանց ժամկություն իրադարձությունները (սպառված)	10
5. Խ. Ալեքարեզյան.—ՀՍԽՀ Հաղային Արենագիրքը, բացարական հարց ու պատասխաններով. մասն տառչին, աշխատ. Հաղպատագործություն (սպառված)	30
6. Գ. Հեթիմյան.—Թթենու ժամկությունը (սպառված)	10
7. Գ. Հեթիմյան.—Ճերաբի վրդր, երա կերակրելն ու բնամքը	10
8. Խ. Յերիցյան.—Կաթնառանառառություն գործնական ձևունորդ, մասն տառչին (64 նկ.) (սպառված)	1 ա. 50
9. Կ. Մելք-Շահնազարյան.—Միախոռնի ժամկությունը (բառապահած)	20
10. Ա. Ֆրիդոլին.—Տառը պատզամ մնանապահին	20
11. Խ. Յերիցյան.—Անհամական, թե՞ կառու կոթնառանություն	10
12. Հ. Հարուրյան.—Բառարմէ, կերպը պայմանագիր (շամփածո) (սպառված)	5
13. Մ. Թումանյան.—Ճարքացանը և նրա նշանակութը	15
14. Խ. Տիր-Ներսիսյան.—Ինչուևս ժամկել խազողի այգիները (28 նկարով) (սպառված)	35
15. Յերեսերս դեպի զյուղ.՝ Անդրկելառյան Յերկրացին Կոմիտացի բանաձեռ զյուղացիական հարցի մասին. Ա. Շաղոնցի նախարարական (սպառված)	15
16. Հայաստանի Կոմիտաֆանական Կուսակցություն կետորնական Կոմիտեյի Զորբորդ Պետերի Բանաձեռը (սպառված)	15
17. Բ. Արմենյան.—Խոշոր յեղջյուրավոր մնանաների ժամանակար (սպառված)	15

ԽՈՐՀՈՂԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. Ա. Ֆ. Խ.-ՌԻՄ
ՅԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԵՏԱԲԻՆԻ
ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԱԿՏՈՒՄ
ԲՈՏՈԽԵՎԵԼՈՒՄ
Պատմական Խուզ
С С С Р

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1930

320/9

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԻՆԱՐԱ-
ՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՔԻՆՀ.-ՌԱՄ**

Համկոմկուսի (թ) Անդրյերկրկոմի վորոշում-
ները Գյուղբաժնի գեկուցման առքիվ

Արձանագրելով խորհրդային տնտեսու-
թյունների գերն ու նշանակությունը տվյալ
ժամանակաշրջանում գյուղատնտեսության
վերակառուցման գործում վորպես.—

ա) Խոշոր ինդուստրացած գյուղատնտե-
սական ձեռնարկություններ,

բ) ելեքտրական ուժի ոգտագործման, տեխ-
նիքական և ազգիկուլտուր ազգեցության
կենտրոններ՝ շրջակա գյուղական տնտեսու-
թյունների վրա,

տ) արտադրական կենտրոններ, վորոնք
նպաստելու յեն գյուղական տնտեսություննե-
րի միավորմանն՝ արտադրական միություննե-
րի մեջ և

դ) գյուղատնտեսական վորակյալ պրոլե-
տարիատի կենտրոններ:

Համկոմկուսի (թ) Անդրյերկրկոմը նշում է,
վոր չնայած նրանց ամրապնդման, խ. տնտե-
սությունների զարգացման թափը վերջին տա-
րիներս գեռ շատ դանդաղ է առաջ գնում. նը-

Հայպովերաֆի տպ. պատ. № 52

Գլանեալ. № 2769 (թ) Տելաժ 1000



60102 · 67

րանց կազմակերպչական-տնտեսական և տեխ-
նիքական մակարդակը ընդհանրապես դեռ շատ
ցածր է:

ԱՍՖԽՀ իւ. տնտեսությունների շինարա-
րության մեջ նկատվում են հետեւյալ խոշոր
թերությունները՝

1. Խ. տնտեսությունների շինարարության
վիճակն ԱՍՖԽՀ-ում գտնվում ե դեռ իր սկզբ-
նավորության ձեերի մեջ։ Գոյություն ունե-
ցող հին խ. տնտեսությունները շատ քիչ չա-
փով են համապատասխանում խ. տնտեսու-
թյան, վորպես խոշոր սոցիալիստական տնտե-
սության՝ ժամանակակից հասկացողությա-
նը։

2. Հին խ. տնտեսությունների մեծ մասն
իրենց տեխնիքական մակարդակով շատ քիչ
են տարբերվում միջակ և, լավագույն դեպ-
քում, որինակելի գյուղական տնտեսությու-
նից։ Քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ ա-
ռանձին գյուղական տնտեսություններ, տեխ-
նիկո-կուլտուրական տեսակետից, կարող
են որինակ ծառայել մեր խ. տնտեսություն-
ների համար։

3. Աշխատանքների ծրագրված լինելը մեր
խ. տնտեսություններում ծայրահեղ անբա-
վարար է։ Խ. տնտեսությունների մեծ մասն
ընդհանրապես չունի և վո՛չ մի արտադրական
ծրագիր։ Յուրաքանչյուր խ. տնտեսության
աճման և զարգացման հեռանկարային ծրա-
գրերը չեն կազմված և վո՛չ մի տեղ։

4. Հողաշինարարությունը խ. տնտեսու-
թյուններում լիովին չի վերջացած։ Այս հան-
գամանքը զրկում է նրանց, իրենց ուժերն ու
միջոցները կանոնավոր ոգտագործելու, ուղիղ
նշելու, և արտադրական աշխատանքները կազ-
մելու հնարավորությունից։ Բոլոր խ. տնտե-
սություններում կան բաժան-բաժան ընկած
հողամասեր, վորոնք տեղ-տեղ հասնում են
միանգամայն անթույլատրելի չափերի։ Նրանց
մեծ մասը չունին առանձին խ. տնտեսության
նորմալ աճման համար անհրաժեշտ պահեստի
ազատ հողամասեր։

5. Հին խ. տնտեսություններն ինվենտա-
րի ջրության և նրանով լիովին բավարարված
լինելու տեսակետից գտնվում են ցածր մա-
կարդակի վրա։ Խ. Տնտեսությունների ինվեն-
տարիզացիան վերին աստիճանի դանդաղ և ա-
ռաջ գնում։ Տեղ-տեղ մաշված ինվենտարը
նույնիսկ չի վերանորոգվում։ Շատ խ. տնտե-
սություններում ամորտիզացիոն մասնահա-
տումները չեն անցնում կապիտալի փաս-
տացի մաշվածության 20-25 տոկոսից։ Խ.
տնտեսությունների ընդհանուր տեխնիքական
մակարդակը շատ քիչ և տարբերվում ունեոր
գյուղական տնտեսությունից։

6. Մեխանիկական քարշիչ ուժը, հաղվա-
գյուտ բացառություններով, չի գործադրվում
խ. տնտեսություններում։ մեծ մասամբ նրանք
փոքրիկ անայնագործական ձեռնարկություն-
ներ են, վորոնք ընդհանուր վոչինչ չունեն ին-

դուստրիալ սոցիալիստական արդադրության հետ։ Կան դեպքեր, յերբ իս. տնտեսությունները մասսայական կերպով մեքենաներ են վարձում շրջակա գյուղացիներից, ոյն ել չառարձրանք զներով։ Իրեւ կանոն, մեքենաների տերերոյ, փորոնք կապ ունիս իս. տնտեսության հետ, կույսկներ են։

7. Կուլտուրական բույսերի մշակությունն ու խնամքը իս. տնտեսություններում, մեծ մասամբ, ավելի լավ չի դրված, քան միջակ գյուղացու մոտ. Հաճախ շրջակա գյուղական տնտեսություններն ավելի լավ դրության մեջ են, քան իս. տնտեսության հողերն ու ինքնտարրը։

8. Խ. անտեսությունները միացնելու և կառավարելու սիստեմը չափից դուրս կենտրոնացած ե։ Տրեստացած իս. տնտեսությունները միանգամայն զրկված են տնտեսական ինքնուրույնությունից և ձեռներեցությունից։ Վարչական ապարատը կտրված է արտադրող միավորներից և, ընդհակառակը, իս. տնտեսությունները միանգամայն կտրված են վարչական ապարատից, տնտեսական ծրագրեր կազմելուց։ Խ. տնտեսությունները կառավարելու այս բյուրոկրատ սիստեմը սպանում է ստորին ապարատի, իս. տնտեսությունների մասնագետների, առավել ևս բանվորների նախաձեռնությունը։

9. Տրեստի մեջ մտնող առանձին իս. տնտեսությունները վոչ միայն չդիտեն տրեստի

տնտեսությունների գրության, նրա ծրագրերի և հեռանկարների մասին, այլև չեն պատկերացնում հենց իրենց տնտեսության լրիվ դրությունը, արտադրած մթերքների ինքնարժեքը, տնտեսության շահավետությունը և այլն։ Ամբողջ հաշվապահությունը, վիճակագրությունը, հաշվետարությունն այն աստիճան է կենտրոնացած, վոր տրեստացած առանձին իս. տնտեսություններում վերոհիշյալ հարցերից և վո՛չ մեկի լրիվ պատասխանը հնարավոր չե ստանալ։ Համարյանույն բյուրոկրատական ձեռվ կենտրոնացած են նաև բոլոր աշխատանքները իս. տնտեսություններում։ Հաճախ տնտեսության վարչությունը զրկված է հնարավորությունից լուծելու ամենահասարակ, տեղական-տնտեսական, անհետաձգելի ու շտապ մի խնդիր, թեկուզ այդպիսին նախատեսված լինի իս. տնտեսության Փինանսական նախահաշվով և հաստատված կետրոնի կողմից։

10. Խ. տնտեսությունների տրեստների աշխատանքների մեջ պետք է նշել առևետրական թեքման դրությունը։ Շատ անգամ արտադրության խնդիրները և նրանց կարիքները դասվում են յետին գծի վրա, իրենց տեղը զիշելով զուտ առևետրական գործարքներին ու կարիքներին։

11. Սրա հետևանքով և մի շաբաթ ուրիշ պատճառներով ԱՄՖԽՀ իս. տնտեսությունների արտադրական պահանջների Փինանսա-

կան բավարարումը (ի բացառյալ Զակվայի և
Կարա-Զալինի խ. տնտեսությունները) վայր է
դրված:

12. Խ. տնտեսությունների և նրանց միու-
թյունների մեծ մասը դտնվում են ֆինանսա-
կան ծանր վիճակի մեջ: Ինչպես կանոն, խ.
տնտեսությունները չունեն իրենց շրջանառու-
թյան միջոցները, և ստացած ոգուտները իրենց
փոխառությամբ վերցրած դրամագլխի տո-
կոս, ամբողջապես տալիս են բանկերին: Մի-
ջոցների բացակայության պատճառով ին.
տնտեսությունները հաճախ հնարավորություն
չունին կատարել արտադրության համար պա-
հանջվող անհրաժեշտ մինիմալ ծախսերը. ըստ
վորում, այն սուղ միջոցները, վորպիսիք ու-
նին խ. տնտեսությունների միությունները,
տրեստի կողմից ողտագործվում են առետրա-
կան գործարքների համար:

13. Առետրական գործարքները խ. տնտե-
սությունների տրեստներում, բայցի հիմնական
ֆինանսական միջոցներից, կլանում են նաև
վարչական ապահարատի հիմնական ուշադրու-
թյունը: Խ. տնտեսության արտադրական աշ-
խատանքների ղեկավարությունը, վորը նույն-
պես ծայրահեղ կենտրոնացած է, կրում է սիս-
տեմետիկորեն անցողակի լուրջի: Թույլ ե
դրված նաև տնտեսության, նրա հնարավորու-
թյունների, արտադրության պայմանների և
այլ հարցերի գիտական ուսումնասիրու-

թյունը. իսկ տեղ-տեղ ել այն բոլորովին բա-
ցակայում ե:

14. Սրա հետ միասին բոլոր տնտեսու-
թյուններում նկատվում են անտնտեսավարու-
թյան, առանց այն ել անբավարար ինվենտարի
վոչ ուացիոնալ ոգտագործման, առանձին խ.
տնտեսությունների բոլոր տնտեսական հնա-
րավորությունների վոչ լրիվ ոգտագործման,
ինվենտարը ցաք ու ցըիվ անելու և առանձին
դեպքերում այդ ուղղությամբ նույնիսկ հան-
ցագործության հասնող յերևույթներ:

15. Վերադիր ծախսերը ամեն տեղ բարձր
են: Առանձին խ. տնտեսությունների միու-
թյուններում վերադիր ծախսերի մասը ար-
տադրանքի ամբողջ արժեքի 75% -ին ե հաս-
նում: Ընդհանրապես արտադրանքի ինքնար-
ժեքը, վորը շատ անգամ նույնիսկ ճիշտ չի
հաշվում (պակասեցրած ե ցույց արվում),
բարձր է, համենայն դեպս ավելի բարձր, քան
նույն արտադրանքի զնման արժեքը, վորը
տրեստը ձեռք ե բերում դյուզական տնտեսու-
թյունից:

16. Սրա հետևանքով և առետրական թեք-
ման գոյության պատճառով, առանձին տը-
րեստներում աշխատանքի ծանրության կենտ-
րոնը փոխադրվում է գյուղական տնտեսու-
թյան արտադրանքը գնելու վրա, իսկ իսր-
հրդային տնտեսության արտադրական կյանքը
քաշվում է յետին գծի վրա, վորի պատճառով
ել խ. տնտեսությունների աճումը դանդաղ և
կատարվում:

Մոտավորապես նույն պատկերն եւ նաև կաթնատնտեսության մեջ: Ճիշտ եւ, այստեղ առևտրական թեքմանն արգելք եւ հանդիսանում այն հանդամանքը, վոր հաճախ գյուղական տնտեսությունները չեն ցանկանում իրենց կաթը հանձել իս. տնտեսություններին, վորովհետեւ նրանց գործարանների պրիմէտիվ ձևով դրված լինելու և բարձր վերադիր ծախսերի պատճառով, զգալի ոգուտ չեն տալիս գյուղացիությանը:

17. Անհրաժեշտ եւ առանձնապես նշել առառողջ մրցման գոյությունը և հանրապետական ու տեղական գյուղատնտեսական տրեստների հարաբերությունների կարգավորած չինելն ու նրանց իրավունքների և պարտականությունների սահմանների անորոշությունը: Միաժամանակ կարելի յեն նշել, վոր տեղական գյուղատնտեսական տրեստներում աշխատանքի դրվածքը գրական իմաստով աչքի յեն ընկերում ապագարատի վոչ փիփածությամբ, ավելի նվազ բյուրոկրատական կննտրոնացմամբ, տպագրատի արագարշարժությամբ ու ճկունությամբ և աշխատանքների ավելի ռացիոնալ ձևերով.

18. Բանվորական հարցը համարյա բոլոր իս. տնտեսություններում վերին աստիճանի սուր եւ: Ամեն տեղ նկատվում եւ բանվորական ուժի հոսունությունը, վորը սովորաբար մատակարարում եւ շրջակա գյուղացիությունը: Բանվորների մեծ մասը իս.

նայում եւ ինչպես անհարազատ, անպետք գործի վրա: Հաճախ կարելի յեւ հայտարարություններ լսեր այն մասին, թե ավելի լավ և այդ հողերը հանձննել գյուղացիության, վորովհետեւ նրանք, իբր թե, ավելի լավ կոդտագործեն:

19. Սրա պատճառով եւ աշխատանքի արտադրողականությունը ցածր մակարդակի վրա յեւ: Այս հարցի հատուկ ուսումնասիրություն չի կատարված և վոչ մի իս. տնտեսության մեջ: Մշտական բանվորների կազմը շատ աննշան եւ սովորաբար պահանջված միջին բանվորական ուժի 10-15% ից չի անցնում. Դրա համար եւ նրանք չեն կարող վճռական ազդեցություն ունենալ աշխատանքի միջին արտադրողականության վրա:

20. Աշխատանքի մեջ անխնամ վերաբերմունք նկատվում եւ նաև մշտական բանվորների կողմից: Բանվորական ուժի ընտրությունը իս. տնտեսություններում թույլ եւ դըրված: Արհեստակցական մարմինների մասնակցությունը մեծ մասամբ անբավարար եւ ճեփական:

21. Բանվորներին սպասարկելու գործը վատ եւ դրված: Սուր եւ բնակարանային խընդիրը: Բանվորների սննդի գործը չի կարգավորված: Կան իս. տնտեսություններ, վորտեղ ճաշարաններ բոլորովին գյուղացիուն չունեն և բանվորները ցամաք հացով են կերակրվում. իսկ տեղատեղ եւ ճաշարանները հանձնված են

Մասնավորներին, վորոնք բառիս իսկական իմաստով թալանում են բանվորներին: Կոռակերացիան համարյա թե չի սպասարկում խոնտեսությունների բանվորներին:

22. Ավելի բարենպաստ վիճակի մեջ և արտհագուստի խնդիրը: Խ. տնտեսությունների մեծ մասում արտհագուստը տրվում ե կանոնավոր և շատ թե քիչ լավ վորակի:

23. Վերջին ժամանակներս կանոնավորվել են նաև աշխատավարձ վճարելու գործը. իրեւ կանոն, բոլոր խ. տնտեսություններում, թե բանվորների և թե ծառայողների՝ աշխատավարձը ժամանակին ե տրվում:

24. Վատ ե խ. տնտեսությունների բանվորներին բժշկական ոգնությամբ սպասարկելու գործը: Տեղական առաջիններն ու Առժողկոմատներն այդ խնդրի վրա բոլորովին ուշադրություն չեն դարձնում: Նույնիսկ այնպիսի խոշոր խ. տնտեսություններ, ինչպիսին ե Զակվայինը, 3.000 բանվորով, չունի իր բժիշկը: Երջանային հիվանդանոցն իր 6 մահճակալով բացարձակապես ի վիճակի չեն բավարարելու խ. տնտեսության բանվորների կարիքը, չնայած վոր Զակվայի տնտեսությունը տարեկան 72.000 ռուբ. ե տալիս ապահովագրական գանձարկղին: Բանվորները վոչ մի տեղ բժշկական քննության չեն յենթարկվում:

25. Խ. տնտեսությունների վրա ու շագրություն չեն դարձնում և միջոցներ չեն

հատկացնում նաև Լուսժողկոմատներն ու նրանց տեղական բաժինները: Լուսժողկոմատի մարմինները չեն սպասարկում խ. տնտեսությունների բանվորներին: Կուլտաշխատանքը, վորը խ. տնտեսություններում տարվում է արհեստակցական միությունների կողմից, նույնպես վերին աստիճանի անբավարար է: Նույնիսկ անզրագիտության վերացման գործը բանվորների մեջ շատ թույլ է դրված:

26. Կուսակցական զեկավարությունը խ. տնտեսությունների վրա ամենուրեք անբավար ե. տեղ-տեղ ել այդպիսին բոլորովին չի յեղել: Վերադաս կուսակցական մարմինների աշխատակիցներից և վո՛չ մեկը մի շարք խ. տնտեսություններում չի յեղել և վո՛չ մի անգամ: Խ. տնտեսությունների մեծ մասում բըջիջները շատ թույլ են: Շատ տեղերում նրանք կազմված են միայն այս տարի:

27. Հետազոտության յենթարկված շատ գավառներում ու շրջաններում կուսակցական մարմինների առաջ չեն դրվել խ. տնտեսությունների շինարարության վերաբերյալ խրնդիրներն ու նրանց զեկուցումները:

Կուսակցական շերտն իր քանակով ամենուրեք անբավարար է, չնայած վոր ըստ առանձին խ. տնտեսությունների այլ քանակը խիստ տարբերվում է իրարից:

Խ. տնտեսությունների վարչական ապահուատներից և վո՛չ մեկում առաջ քաշվածներ չկան: Խ. տնտեսությունների ապահուատում

իցկվել են անհարազատ տարրեր, մինչև իսկ դենիկինյան գեներալներ և նախկին կալվածատերեր:

28. Կանանց մեջ տարվող աշխատանքը իւ. տնտեսություններում թույլ ե: Բոլոր իւ. տնտեսություններում (բացի Զակվայից) կին բաժնի ներկայացուցիչը չի յեղել և վո՞չ մի անդամ: Կին պատգամավորներ չկան և վոչ մի տեղ:

Այնպիսի իւ. տնտեսություններում, վորտեղ կան 30-50-70 յերեխա, չկան վոչ մանկական հրապարակներ, վոչ մասուրներ: Թե՛ կին բաժնները և թե՛ լուսբաժիններն այս իրնդիրներով չեն զբաղվել և չեն զբաղվում:

29. Կազը գյուղացիության հետ, համարյա բոլոր իւ. տնտեսություններում, բացակայում ե: Ու. տնտեսությունները դեռ ևս չեն հանդիսանում սոցիալիստական կուլառուրայի կինտրոններ: Այս ու այնտեղ անվստահ փորձեր են անում կազյոննի զեկուցումներ և դասախոսություններ դնելու համար, սակայն այդ աշխատանքն ել դեռ չի ծավալված:

30. Սուր ե դրված մասնագետների կադրի խնդիրը: Ու. տնտեսությունները բավարար կերպով չեն ամբողջացած մասնագիտական ուժերով: Դրա հետ միաժամանակ մեծ թվով մասնագետներ նստել են իւ. տնտեսությունների տրեսուների վարչությունների մեջ և ըդրազված են վարչական-դրասենյակային աշխատանքներով: Այդ գյուղատնտեսների իւ.

տնտեսություն գնալը պատահական բնույթ ե կրում և շատ հաճախ վոչ գործի համար: Ընդհանրապես վարչությունների հաստիքներն ուղցրած են և բյուրոկրատական:

31. Դրա հետ միասին զգացվում ե միջին վորակի մասնագետների (անասնաբույծներ, այգեգործներ և այլն) պակասություն:

Մեր դպրոցները չեն լրացնում այդ բացը:

32. Ու. տնտեսություններում միանգամայն բացակայում են մասնագետ-կուսակցականներ: Այնուամենայնիվ թեև քիչ թվով, բայց այլպիսիները կան կենտրոնական ապարատներում: Կուսակցական մարմիններն այդ խնդիրներով չեն զբաղվում:

33. Ի յեղբակակումն պետք ե նշել մի շարք անառողջ և վոչ կոմունիստական վերաբերմունքի դեպքեր դեպի իւ. տնտեսությունները, մի քանի խորհրդային և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից: Առանձին կազմակերպություններ մերժում եյին կանխիկ վճարով բաց թողնել իւ. տնտեսություններին անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ այն ժամանակ, յերբ այդպիսիներն ապառիկ բաց եյին թողնում անհատական գյուղական տնտեսություններին:

Յեղել են դեպքեր, յերբ իւ. տնտեսություններն անհատական գյուղական տնտեսությունների անվան տակ, գյուղմեքենաներ ու

այդ պատճառով ել հենց սկզբից նկատվում է օք վոր աշխատանքները դրված են պրիմիտիվ հիմքերի վրա:

Ցեղնելով ԱՍՖԽՀ իւ. տնտեսությունների շինարարության վերոհիշյալ դրություննից, Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմն անհրաժեշտ ե համարում.

1. Զեռք առնել շտապ միջոցներ արագացնելու նոր իւ. տնտեսությունների շինարարության թափիը, նաև ամրացնելու և առողջացնելու գոյություն ունեցող իւ. տնտեսությունները, նպատակ ունենալով վերածել նրանց սոցիալիստական տիպի խոշոր ձեռնարկություն բարձր տեխնիքական բազայի վրա:

2. Հետագայում իւ. տնտեսությունների շինարարության նկատմամբ ես պետք են նշել աշխատանքների անբավարար ծրագրված լինելլ, ուղիղ ու ճշգրիտ հաշիվների բացակայությունը, և կարեռ ու վճռական նշանակություն ունեցող մի շարք տնտեսական և ֆինանսական մոմենտների հաշվի չառնելը:

3. Նոր իւ. տնտեսությունների շինարարության վրա նույնպես չի կենտրոնացած կուսակցական, արհմիութենական և կոռպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը: Բաց թողած միջոցներն անբավարար են և

60102 - 67

դործիքներ են ստացել կոռպերատիվ կազմակերպություններից:

34. Հողժողկոմատները և տեղական հողմարմիններն անուշաղը ըստ յան են մատնում իւ. տնտեսություններին թեկուղ աննշան տարածությամբ հողամասեր հատկացնելու պահանջները: Կարելի յեն նշել մի շարք դեպքեր, յերբ Հողժողկոմատներն առանց պատճառարաններու և կազյոննի գրագրությամբ մերժել են իւ. տնտեսությունների այնպիսի պահանջները, վորոնց կարելի յեր շատ հեշտությամբ բավարարել:

35. Առանձին կոռպերատիվ կազմակերպությունների կողմից նկատվում են անառողջ մրցան դեպքեր իւ. տնտեսությունների հետ, և յերբեմն ուղղակի վնասում նրանց աշխատանքներին ու իւ. տնտեսությունների հեղինակությունը գցում գյուղացիության աչքում:

36. Նոր իւ. տնտեսությունների շինարարության նկատմամբ ես պետք են նշել աշխատանքների անբավարար ծրագրված լինելլ, ուղիղ ու ճշգրիտ հաշիվների բացակայությունը, և կարեռ ու վճռական նշանակություն ունեցող մի շարք տնտեսական և ֆինանսական մոմենտների հաշվի չառնելը:

37. Նոր իւ. տնտեսությունների շինարարության վրա նույնպես չի կենտրոնացած կուսակցական, արհմիութենական և կոռպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը: Բաց թողած միջոցներն անբավարար են և

հատուկ տիպի խ. տնտեսություններ կազմակերպելու գծով, ընդ վորում, հիմնական ուշադրությունը պետք է դարձնել պտղաբուժական և անասնաբուժական խ. տնտեսությունների վրա: Մասնավորապես անհրաժեշտ է 1929-30 թվից ձեռնարկել ԱՍՖԽՀ բոլոր հանրապետություններում խոչոր հացահատիկային խ. տնտեսություններ կազմակերպելու շխատանքներին:

4. Համկոմկուսի(թ) Կենտկոմի, բամբակային տնտեսությունների մասին տված հրահանգի հետևանքով, առանձնապես զատել բամբակային խ. տնտեսություն կազմակերպելու խնդիրը: Պարտավորեցնել հանրապետությունների Կենտկոմներին, առաջին հերթին ԱՍՖԽՀ Կենտկոմին, ըստ հնդամյա ծրագրի մշակել բամբակաբուժական խ. տնտեսությունների ցանցի լայնացման թափն ուժեղացնելու խնդիրը:

Պարտավորեցնել Անդրբամբակկոմին և Անդրջրտնտեսությանը տվյալ հարցի վերաբերյալ իրենց յեղբակացությունը 2 ամսվա ընթացքում, ներկայացնել Համկոմկուսի(թ) Անդրյերկրկոմի Գյուղբաժնին:

5. ԱՍՖԽՀ խոչոր քաղաքների և արդյունաբերական կենտրոնների պարենավորման բազաներն ընդարձակելու և ուժեղացնելու նպատակով, առանձնապես ծավալել քաղաքամերձ խ. տնտեսությունների շինարարությունը, դրա համար ոգտագործելով, բացի

բյուջետային հատկացումներից ու կենտրոնացած վարկերից, նաև տեղական կազմակերպությունների միջոցները:

Սոշոր քաղաքներին ու արդյունաբերական կենտրոններին անմիջականորեն մոտ ընկած շրջաններում, իբրև կանոն խ. տնտեսությունների շինարարությունը տանել կաթնատնտեսության, բանջարաբուժության, թռչնարուծության և այգեղործության գծով:

6. Ի զարգացումն Համկոմկուսի(թ) Կենտկոմի, հին խ. տնտեսություններն ուժեղացնելու մասին կայացրած վորոշման, առաջարկել Անդրժողկոմխորհին 1929-30 թվին ապահովել գոյություն ունեցող խ. տնտեսությունների հիմնական ներդրումների ֆինանսավորումը՝ պետական բյուջեյի և յերկարատև վարկերի կարգով, ըստ հնդամյա ծրագրի, միաժամանակ հաշվի առնելով նաև 1928-29 թվի ֆինանսավորման անբավարար լինելը:

7. Պարտավորեցնել Անդրժողկոմխորհին և հանրապետությունների կե(թ) կենտկոմներին ձեռք առնել վճռական միջոցներ իրադործելու Համկոմկուսի(թ) կենտկոմի հրահանգն այն մասին, թե հիմնական ներդրումների համար պետքյուջեյով ու յերկարատև վարկի ձեռվով միջոցներ բաց թողնելու խնդրում, խ. տնտեսությունները պետք է հավասարեցնել արդյունաբերական ձեռնարկություններին:

8. Առանձին ուշադրություն դարձնել խ. տնտեսությունների սեփական շրջանառության

միջոցներն ուժեղացնելու վրա, նախատեսելով
այդ նպատակի համար հատուկ բյուջետային
հատկացումներ 1929-30թ.։

9. Վճռականորեն արգելել ամեն տեսակի
մասնահատումներ, նաև իւ. տնտեսություն-
ների ու նրանց միությունների վրա կողմանակի
ծախսեր բարդելը, վորը կատարվում է մինչև
այժմ մի շարք տեղական ու կենտրոնական
կազմակերպությունների և Հիմնարկություն-
ների կողմից։

10. Հանձնարարել Անդրֆինժողկոմատին
1929-30թ. բյուջեյում նախատեսել անհրա-
ժեշտ միջոցներ՝ կենապործելու միութենա-
կան մարմինների վորոշումները, գոյություն
ունեցող իւ. տնտեսությունների հին պարտքե-
րը դուրս գրելու մասին։

Սրա հետևանքով հանձնարարել Անդրժող-
կոմխորհին ուսումնասիրել և համապատաս-
խան միջոցներ ձեռք առնել, իւ. տնտեսու-
թյունների հին պարտքերը գյուղբանկերի կող-
մից 1928-29 տարում դանձելու մասին։

11. Առաջարկել Անդրբանգյուղտեսչու-
թյանը և Անդրֆինժողկոմատին ստուգել իւ.
տնտեսությունների ֆինանսական հաշվետվու-
թյան վիճակը, միջոցներ ձեռք առնել պար-
զեցնելու իւ. տնտեսությունների միություն-
ների և առանձին խոշոր իւ. տնտեսությունների
հաշվեկշիռները, մշակել և տալ հաշվետարու-
թյան և հաշվետվության միանման ձևեր։

Սրա հետ միասին սահմանել իւ. տնտեսու-

թյունների արտադրանքի ինքնարժեքը (կալ-
կուլացիան) վորոշելու միանման մեթոդներ։

12. Առաջարկել բոլոր մեքենամատակա-
րարող կազմակերպություններին և Գյուղբան-
կերին, գլխավորապես Զակսելսոյուզին, առա-
ջին հերթին ապահովել ինչպես նոր, այնպես
ել գոյություն ունեցող իւ. տնտեսությունները
տրակտորներով, գյուղատնտեսական բարդ
մեքենաներով և այլ գործիքներով, բաց թող-
նելով այդպիսիք յերկարատև վարկի պայ-
մաններով։

Հանձնարարել Անդրբանգյուղտեսչությանը
հետեւ սույն վորոշման անշեղ ու իր ժամա-
նակին կատարելուն և խորհրդային ու կու-
ռակցական պատասխանատվության յենթար-
կել վորոշումը խախտող կազմակերպություն-
ների ղեկավարներին։

13. Պարտավորեցնել բոլոր պետական,
կոոպերատիվ ու հասարակական կազմակեր-
պություններին միջոցներ ձեռք առնել, առա-
ջին հերթին սպասարկելու իւ. տնտեսություն-
ներին վնասատունների դեմ պայքարի և հան-
քային և ուրիշ պարարտանյութեր հայթայթե-
լու գործում։

14. Պարտավորեցնել Անդրառեսրի ժող-
կոմատին և Անդրֆինժողկոմատին իմպորտա-
յին ծրագրեր կազմելիս մաքսիմալ կերպով
հաշվի առնել գոյություն ունեցող և նոր կազ-
մակերպվող իւ. տնտեսությունների մեքենա-
ների ու սարքավերման պահանջը։

15. Միանգամայն անթույլատրելի համարել, ինչ անվան տակ ել վոր լինի, հողեր կը տրել իս. տնտեսություններից:

Պարտավորեցնել հանրապետությունների Հողժողկոմատներին շտապ ու անվիճելի կարգով լուծել իս. տնտեսություններին հողեր հատկացնելու խնդիրը:

16. Վճռականորեն առաջարկել հանրապետությունների ԿԿ(բ) կենտկոմներին, ձեռք առնել կտրուկ միջոցներ 1929-30 թ. ընթացքում ավարտելու իս. տնտեսությունների արտաքին ու ներքին հողաշինարարությունը, այդ նպատակի համար առանձնացնելով հողաշինարարների վորոշ կադր:

Առաջարկել Հողժողկոմատներին իս. տընտեսությունների հողաշինարարության ժամանակ, հողացըլածությունը, հողհետալորությունը և հողոգտագործման այլ թերությունները վերացնելու նպատակով կատարել հողամասերի հարկադրական փոխանակություն, համաձայն գոյություն ունեցող որենսդրության (Հող. Որ.), փոխատուցելով հողոգտագործողների տնտեսական վիճանները:

17. Առաջարկել Հանրապետությունների ԿԿ(բ) կենտկոմներին, յուրաքանչյուր առանձին դեպքում, առանց կենտկոմի սանկցիայի, արգելել բոլոր թե՛ կենտրոնական և թե՛ տեղական կազմակերպություններին, լուծարքի յենթարկել կամ տեղական կազմակերպու-

թյուններին հանձնել պետական նշանակություն ունեցող իս. տնտեսությունները:

18. Նկատի ունենալով մեծ քանակությամբ վնասաբեր, վորքը և զարգացման հեռանկարներ չունեցող իս. տնտեսությունների գոյությունը, անհրաժեշտ համարել զերանայել յեղած տեղական և հանրապետական նշանակություն ունեցող իս. տնտեսությունների ամբողջ ցանցը: Հանձնարարել Հանրապետությունների ԿԿ(բ) կենտկոմներին, մինչև 1930 թ. գարնանցանի սկիզբը լուծել այս խնդիրը:

19. Նպատակահարմար համարել, սրա հետեւնքով լուծարքի յենթարկվող իս. տնտեսություններն ոգտագործել վորպես աղբոկայաններ, փորձնական հիմնարկությունների հենակետներ, ուսուցանողական տնտեսություններ և այլն, հանձնելով այդպիսիք համապատասխան կազմակերպությունների տնտեսությանը:

Առանձին դեպքերում հարավոր համարել, լուծարքի յենթարկվող իս. տնտեսությունները հանձնել կոլտնտեկնարոնին, բարձր տիպի կոմունաներ և կոլտնտեսություններ կազմակերպելու համար:

20. Առաջարկել հանրապետությունների ԿԿ(բ) կենտկոմներին քննության առնել և Անդրյերկրկոմ մացնել հանրապետական մասնակիությունը իս. տնտեսությունները կառավարելու կենտրոնացման խնդիրը (Խորտնտարեսությամ Խորտնտկենտրոն):

21. Արգելել տեղական մարմինների վարչական միջամտությունը իս. տնտեսությունների և նրանց տրեստների ողբերատիվ տնտեսական գործունեյությանը:

19. տնտեսությունների և նրանց կենտրոնների փոխարարերությունները տեղական մարմինների հետ, պետք է արտահայտվեն համաձայնեցնելով՝ իրենց ծրագրերը տվյալ շըրջանի գյուղատնտեսության դրագացման և վերակառուցման ծրագրերի հետ:

22. Սրա հետ միասին հանձնարարել հանրապետությունների. ԿԿ(բ) կենտկոմներին սահմանել իս. տնտեսությունների փոխարարերության կարգը իս. տնտեսությունների միության հետ, այն հաշվով, վորպեսզի ապահովի իս. տնտեսությունների նախաձեռնությունն ու ինքնադրծունեյությունը, հաստատված տարեկան գործառնական ծրագրերի սահմաններում:

23. Պարտավորեցնել հանրապետությունների ԿԿ(բ) կենտկոմներին և Անդրժողկոմխորհին միջոցներ ձեռք առնել, վորպեսզի իս. տնտեսությունների ու նրանց միությունների տարեկան ռեալ գործառնական ծրագրերը հաստատվեն վոչ ուշ, քան գործառնական տարվա սկիզբը:

Սրա հետ միաժամանակ անթույլատրելի համարել իս. տնտեսությունների մեծ մասի պերսպեկտիվ և կաղմակերտչական ծրագրերը չունենալը, հանձնարարելով հաստատվեն վոչ ուշ, քան գործառնական տարվա սկիզբը:

թյունների ԿԿ(բ) կենտկոմներին միջոցներ ձեռք առնել՝ հետագայում այդպիսիք կազմելու և հաստատելու համար:

24. Առաջարկել հանրապետությունների ԿԿ(բ) կենտկոմներին ձեռք առնել միջոցներ, վերացնելու խորհրդային տնտեսությունների միությունների աշխատանքից առևտրական թեքման տարրերը:

Գյուղացիության՝ գյուղատնտեսական արտադրանքի պատրաստումների և իրացումների մասում սահմանագծել և կարգավորել մի կողմից իս. տնտեսությունների ու նրանց միությունների և մյուս կողմից՝ պետական առևտրի և կոռպերացիայի ֆունկցիաներն ու փոխարարերությունները:

25. Հանձնարարել Անդրաբհմխորհին և Անդրաշխողկոմատիին, Անդրյերկրկոմի Գյուղաժնի հետ միասին, յերկու ամսվա ընթացքում մշակել և Համկոմկուսի(բ) Անդրյերկրկոմի հաստատությանը ներկայացնել իս. տնտեսություններում բանվորական հարցը կարգավորելու գործնական ձեռնարկումներ, ըստ վորում նկատի ունենալ իս. տնտեսության կեց շրջանների գյուղացիությանը իս. տնտեսության աշխատանքների մեջ մաքսիմալ կերպով ներդրավելու անհրաժեշտությունը: Հատուկ ուշադրություն դարձնել արտադրական խորհրդակցությունների աշխատանքների և սոցիալիստական մրցություն կազմակերպելու վրա:

26. Հանձնարարել Անդրբանդյուղտեսությանը շտապ կարգով կատարել իս. տնտեսությունների ապագարատի զտումը:

Առաջարկել Անդրյերկրկոմի բաժիններին մշակել իս. տնտեսությունների աշխատավորների նոր կադրեր պատրաստելու և հները վերապատրաստելու վերաբերյալ ձեռնարկումներ:

27. Առաջարկել հանրապետությունների կենտկոմներին, վճռականորեն ուժեղացնել կուսակցական ղեկավարությունը իս. տնտեսություններում, հասարակական կազմակերպությունների, առաջ քաշումների և այլ ինդիբներում:

28. Նշելով վոչ բավարար ուշադիր և շատ անգամ արհամարհական վերաբերմունք դեպի իս. տնտեսություններն ու նրանց բանվորների կուլտուրական շահերը՝ մի շարք կուսակցական, կոոպերատիվ և արհմիութենական կազմակերպությունների կողմէց, Համկոմկուսի (բ) Անդրյերկրկոմը նման յերեսույթը նկատելով, վորպես գյուղատնտեսության սոցիալիստական վերաշնուրթյան ասպարիզում, կուսակցական հիմնական գծի խախտում, — Համարում ե միանդամայն անթույլատրելի:

Պարտավորեցնել հանրապետությունների Առժողկոմատներին, Լուսաժողկոմատներին և կոոպերատիվ կենտրոններին վերանայել իրենց բոլոր ծրագրային առաջադրությունները, և այդպիսիք կազմել իս. տնտեսությունների և

նրանց բանվորների կարիքներին մաքսիմալ կերպով սպասարկելու ուղղությամբ:

29. Առաջարկել տեղական կուսակցական կազմակերպություններին, ապահովել կուսակցական-արհմիութենական աշխատանքների ղեկավարությունը իս. տնտեսություններում և կարգավորել իս. տնտեսությունների բանվորական մասսաների կուլտուրական սպասարկությունը:

Առաջարկել կուսակցական կազմակերպություններին, վերածել իս. տնտեսությունները գյուղատնտեսական գիտելիքների և գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցման գաղափարների կուլտուրական կենտրոնների՝ շրջակա գյուղացիական լայն մասսաների համար:

30. Առաջարկել Համկոմկուսի(բ) Անդրյերկրկոմի Գեղջկուհու բաժնին և հանրապետությունների կենտկոմներին նշել իս. տնտեսություններում կանանց մեջ տարվող աշխատանքներն ուժեղացնելու և նրանց յուրահատուկ կարիքներին սպասարկելու գործնական ձեռնարկումներ (մսուրներ, մանկական հրապարակներ, հասարակական լվացարաններ, ճաշարաններ և այլն):

Պարտավորեցնել համապատասխան խորհրդագյին մարմիններին ֆինանսապես ապահովել այդ ձեռնարկումները:

31. Առաջադրել խ. տնտեսություններին ամեն կերպ ուժեղացնելու արտադրական շաղկապը գյուղացիության հետ, ագրիկուլտուր և արտադրական-տեխնիկական ոգնության դաշտվ չքավոր գյուղացիությանը, գլխավորապես միջակներին ու դրանով ամեն կերպ նպաստել ըրջակա գյուղական տնտեսությունների կոոպերացմանն ու կոլլեկտիվացմանը:

Նպատակահարմար համարել առանձին խ. տնտեսությունների շեֆությունը կոլտնտեսությունների կամ ամբողջ գյուղերի վրա:

Պարտավորեցնել տեղական կուսակցական, խորհրդային ու կոոպերատիվ կազմակերպություններին գործնական ոգնություն ցույց տալ խ. տտեսություններին այդ աշխատանքներում:

32. Հանձնարարել հանրապետությունների կերպ(թ) կենտկոմներին, Անդրժողկոմի խորձին, Զակսելսոյուղին, Զակսոյուղին և Անդրժ գյուղանկին, սույն վորոշման հիման վրա մշակել մանրամասն գործնական ցուցմունքներ ստորին կազմակերպությունների համար, նպատակ ունենալով ապահովել այս վորոշման կատարումը:

33. Հանձնարարել Համկոմկուսի(թ) Անդրժերկոմի Գյուղբաժնին 1930 թ. գարնանը հրավիրել լայն խորհրդակցություն խ. տնտեսությունների ստորին աշխատավորների մասնակցությամբ. և քննության առնել

ԱՍՖԽՀ խ. տնտեսությունների դրությունն ու նրանց շինարարության հեռանկարները:

34. Հանձնարարել Համկոմկուսի(թ) Անդրժերկոմի Ագիտավրոպ յենթարաժնին, ձեռք առնել միջոցներ մամուլում լայն կերպով լուսաբանելու ԱՍՖԽՀ խ. տնտեսությունների շինարարության տեսական և գործական խնդիրները:


35. Սույն վորոշման իրավործելու մասին լսել Համկոմկուսի(թ) Անդրժերկոմի Գյուղբաժնի գեկուցումը վոչ ուշ, քան 1930 թ. մայիսի 1-ը:





18.	Հեղաւյան.—Գյուղատնտեսական բանգօրութիւն և միջնադպրութիւն	40
19.	Եւ համեմատական չարժումը (սպառված)	15
20.	Եկեղիճնամբով.—Հավաքած և երաց ոգուան (սպառված)	20
21.	Ա. Դամելիքով.—Լույս և ուշ, քան յերեք (ազքառփեխ)	20
22.	Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Գոտվհատը և կանեփը (բառապահ)	20
23.	Ո. Լուկաշին.—Անդրկովկասի տնտեսական գրությունը (սպառված)	15
24.	Հրանտիկ Հայաստանի և Ս. Համբավետուրյան անտառներից փայտեղեն քաց բաղնիւու համար (պաշտոնակ.)	20
25.	Գրոֆ. Ալ. Քալանքար.՝ Կաթնառու կոճի կերակր (բառապահ)	30
26.	Ա. Ա. Տրիփոնով.—Ինչու պետք և յելք չուտ անել	15
27.	Ա. Բակունից.—Գալուստի միկը (ազքո-պատմվածք)	15
28.	Ա. Բակունից.—Կարսաֆիլի մշտկությունը (սպառված)	20
29.	Լ. Առըռուին.—Կոճի գատը (ազքո-պիյես)	20
30.	Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.—Տիգրանի (սպառված)	5
31.	Խա. Տեր-Ներսիսյան.—Պաղասու ծառերի վնասառուներն ու հեղանդությունները (սպառված)	25
32.	Արագի.՝ Տրտկոտը (ազքո-պատմվածք)	15
33.	Յալուացի.—Խորհրդագոր տրատէմբեր (ազքո-զբույց)	15
34.	Խելու-ապեր.՝ Գյուղատնտեսանանարութը և բր տպությունը	20
35.	Ս. Ֆրիդրիխ.՝ Տառը պատաժ անասնազահին (բառապահը)	20
36.	Վ. Խանզադյան.—Մեղվարութություն գործնական ձևունարկ (սպառված)	60
37.	Արամայիս Յեղիկյան.—Մելք գյուղատնտեսություն հերթական խնդիրներից (սպառված)	40
38.	Ա. Արամայիս.՝ Գորթո՞ն, թէ՞ որոք (սպառված)	10
39.	Վ. Բոյկով.՝ Այծն ազքատի կոճն և (սպառված)	20
40.	Խա. Տեր-Ներսիսյան.՝ Եւ մաղբը	20
41.	Ի. Կովենեցով.՝ Անինը և գյուղացիությունը	30
42.	Ա. Մուշեղյան.՝ Անտառ պետք և հաշմուկ կարել	5
43.	Խա. Տեր-Ներսիսյան.՝ Ինչպես պատվառել պաղասու ծառերը	10

ՀՀ Ազգային գրադարան



NL0209549

44.	Ա.	Բակունից.—Խոստքարի կամունան	30	
45.	Հ.	Ազատյան.—Յևազաշտից դեպի սոցիալիզմ՝ կոսովերացիցի վրայով	30	
46.	Վ.	Միխայլով.—Տագարի վարժեկիչ ժիղանգությանները	1 ա.	50
47.	Մ.	Թումանյան.—Վեհ	5	
48.	Պ.	Քայլանքարյան.—Գումազը	25	
49.		Ենյեմբերի հանապարհն (ժողով.) (սպասված)	5	
50.	Պրաֆ.	Ակ.	Քալանքար.՝ Կաթոնառատ կովի ընտրությունը և նախընտրի ազնվագումը	20
51.		Հրանտինը, գյուղատնտ. կառու. ընկերութ. տաժարագրելու կարգի մասին (Տագ. «Գյուղ. կյանք»-ի)	20	
52.	Հ. Սևազ	Խողովագործության և Խողաշինարարության ընդհանուր հիմունիքները	20	
53.	Հ.	Փիրումյան.—Հոգժայկումարի 1927-28 թ. դարձանելությունը	20	
54.	Ա.	Արմենյան.—Դեպի ընքի բնրքի բարձրացում		
55.	Վ.	Գորբինին.—Զիւրի արհեստ. ըեղմնափորումը	25	
56.	Ա.	Վերիշյան.—Պազարու այլին ու նրա խնամքը	45	
57.	Ա.	Մարգարյան.—Դաշխարարություն		
58.	Ա. Ա. և Ա. Թ.	Բանջարարություն		
59.	Ա.	Ցեղանդյան.—Ամֆիշ անհանագահությունը և գյուղական բնույթի ապահովացումը	25	
60.	Հ. ՈՒՐԻԿ (թիվ 1) Վորոշումը բամբակագործության մասին	25		
61.	Ա.	Արմենյան.—Բերքի և կուեկտիվացման առնը		
62.	Խ.	Խնամուն.՝ Ժիմարարությունը Ա.Օ.Ֆեյ-ունի		

ՊԱՏՐԱՍՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿԱԱԶՆՎԵՆ ՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Խա. Տեր-Եկրախյան.—Խնչողի մշակելու խողովի արդիները (Բ. առաջարկություն)
 2. Ա. Ալյանյան.—Մեղմագահի Արդեցույց
 3. Պ. Քայլանքարյան.—Բերքի բարձրացման խնդիրներ
 4. Ար. Խանհայյան.—Հանրամատելի գրույներ դինեղործությունը:
- ԳԵՐԵԼ. Յերեվան, Հողմողկումատ, Հրատարակչության,
«Հայքի հայկական ապահովանական և պալատական գրախանությունին, Գավհանդիմեներին»: